

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

**The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre**



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*Հուլիս*

*2022թ.*

Յ Գորիս Ջ

**29.07.2022 թ.**

**Բազմաբնակարան շենքի վերակառուցում, խաղահրապարակ, լուսավորության ցանցի արդիականացում. Շուտնուխում համայնքի միջոցներով բազմաթիվ ծրագրեր են իրականացվում**

Շուտնուխում 4 ընտանիք բնակարանամուտ կտոնի: Համայնքի միջոցներով վերակառուցվել է համայնքային ենթակայության շենքը: Շինաշխատանքներն արդեն ավարտվել են, բնակարանների բանալիներն առաջիկայում կհանձնվեն 4 ընտանիքների: Համայնքի միջոցներով, գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ Շուտնուխում բազմաթիվ ծրագրեր են իրականացվում, համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանն այցելել է բնակավայր, հետևել շինաշխատանքների ընթացքին: Փոքրիկների համար նաև խաղահրապարակ է կառուցվում՝ ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրի շրջանակներում: Գորիսի համայնքապետարանի և ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրի շրջանակներում լուծվել էր նաև բնակավայրի գիշերային լուսավորության հարցը, արդիականացվել է լուսավորության ցանցը:

Շուտնուխը նաև մանկական զարգացման կենտրոն կունենա, սենյակի նորոգման աշխատանքներն ավարտվել են, այժմ կահավորման աշխատանքներ են իրականացվում: Ոչ միայն Շուտնուխում, նաև համայնքի գրեթե բոլոր բնակավայրերում այս պահին բազմաթիվ ծրագրեր են իրականացվում՝ ուղղված ենթակառուցվածքների բարելավմանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/5400644483363088>

**28.07.2022 թ.**

**Վրաստանում կայացավ «Արևոտ Վրաստան 2022» երգի և պարի փառատոնը**

Վրաստանում կայացավ՝ «Orange Kobuleti 2022» երգի և պարի փառատոնը:

Փառատոնին մասնակցում էր նաև Կապանի մշակույթի կենտրոնի «Զանգեզուր ժողովրդական պարային անսամբլը»:

Անսամբլը փառատոնում զբաղեցրեց առաջին պատվավոր տեղը:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/CulturalCenterOfKapan/posts/1749183852104625>

**28.07.2022 թ.**

**Գինեձոն Կապանում. ներկայացվեց «Քնարե» լիբիկական անվամբ գինին**

Կապանի մշակույթի կենտրոնի նախասրահում գինու բույր էր և անչափ անմիջական մթնոլորտ, որի պայմաններում «Գինու արվեստ» գինեգործական ընկերության նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Քնարե» նարնջագույն գինու ձոնման արարողություն և համտես: Գինին Տերունական աղոթքով օրհնեց Կապանի հոգևոր հովիվ Տեր Խաչատուր քահանա Հայրապետյանը, որից հետո գինեձոնի մասնակիցները հնարավորություն ունեցան համտեսելու աստվածատուր այդ խմիչքը:

«Քնարեի» ստեղծման մասին հակիրճ ներկայացրեց և գինեձոնին պատշաճող խոսք ասաց «Գինու արվեստ» ՄՊ ընկերության հիմնադիր տնօրեն Տիգրան Ավագյանը՝ մասնավորապես նշելով, որ թեև Կապանը խաղողագործության և գինեգործության օրրան չէ, բայց ամեն դեպքում փորձում են Արագածոտնի և Վայոց ձորերի մարզերից հետո այդ

մշակույթը ներդնել Հայաստանի մյուս մարզերում, այդ թվում նաև Սյունիքում, և այս համատեքստում երախտագիտություն հայտնեց Մարինե Սահակյանին, ով ընկերության համահիմնադիրն է և ում ջանքերի ու նվիրումի շնորհիվ ծնունդ է առել «Քնարեն»:

Մարինե Սահակյանը՝ նույն ինքը միսս Մարինեն, Կապանա տան ոչ պաշտոնական դեսպանն է Չինաստանում: Անգլերենի մասնագետը վերջին տարիներին բնակվում է այդ երկրում, բայց հոգով ու սրտով իր սիրելի Կապանի հետ է: Շատերիս համար նորություն էր, որ նա ներգրավված է գինու արտադրության մեջ և «Գինու արվեստ» ՄՊ ընկերության համահիմնադիրն է, մի ընկերություն, որը կարճ ժամանակահատվածում հայկական գինին ներկայացրել է աշխարհում: Իր գինին էլ «Քնարե», պաշտելի դուստրերի՝ Քնարի և Նարեի անունների համադրությամբ է կոչվում:

Կայացավ ցուցահանդես-վաճառք, որից գոյացած հասույթը հատկացվելու է բարեգործական նպատակների համար: Նաև տեղի ունեցավ նկարչուհի Աննա Մանգասարյանի վրձնած «Քնարե» գեղանկարի աճուրդը: Այս ամենն ուղեկցվում էր սրտամոտ երգ-երաժշտությամբ և անկեղծ շնորհավորանքներով:

Միջոցառմանը մասնակցում էին Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը, այլ պաշտոնատար անձինք, Մարինեի մտերիմներն ու նրան ճանաչողները, պարզապես կապանցիներ:

Իր համաքաղաքացիներին երախտագիտության խոսքերով համեմված տեսաուղերձ հղեց Մարինե Սահակյանը՝ էկրանից հնչող խոսքում ուրախություն հայտնելով, որ իր սիրելի քաղաքը համայնքապետ Գևորգ Փարսյանի ջանքերով օրավուր ակնահաճո ու բարեկարգ է դառնում:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/ginedzon-kapanum-nerkayatsvets-qnare-lirikakan-anvamb-ginin>

**27.07.2022 թ.**

### **Կապանի «Սյունիք» օդանավակայանում տեղադրվել է վերջին սերնդի օդերևութաբանական կայան**

Այսօր շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանն աշխատանքային այցով եղել է շրջակա միջավայրի նախարարության «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ում: Այդ մասին ասված է ՇՄ նախարարության Ֆեյսբուքի էջում:

«Նախարարի տեղակալին այցի ընթացքում ուղեկցել է նախարարի օգնական Պարույր Միմոնյանը: Այցի նպատակն էր տեղում ծանոթանալ ընկերության աշխատանքների ընթացքին և ՓԲԸ-ում իրականացված բարեփոխումներին:

Նախարարի տեղակալի այցը մեկնարկել է շրջայցով օդերևութաբանական դիտարկումների հրապարակ և ավտոմատ օդերևութաբանական կայանների աշխատանքների ծանոթացմամբ:

Նախարարի տեղակալը ծանոթացել է ընկերության կողմից օդերևութաբանական տվյալների արձանագրման, տեղեկատվության հաղորդման գործընթացին, հետևել աշխատանքների ընթացքին, ապա ընկերության ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ խորհրդակցություն անցկացրել, որի ընթացքում տնօրենի պաշտոնակար

Թաթուլ Հայրապետյանը գեկույցի տեսքով ներկայացրել է «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացված աշխատանքները, քննարկվել են դրանք ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով նախատեսված ծրագրերն ու միջոցառումները:

Հաշվետու տարվա ընթացքում զգալի աշխատանքներ են տարվել քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկման որակի, աշխատանքային կարգապահության բարձրացման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի նվազեցման, շահույթի ապահովման ուղղությամբ:

Թոփչքների անվտանգությունն ապահովվել է միջազգային չափանիշներին համապատասխանող օդերևութաբանական տվյալների և կանխատեսումների տրամադրմամբ՝ շնորհիվ բարձր որակավորմամբ աշխատակիցների, շահագործվող ժամանակակից սարքավորումների, ավտոմատ համակարգերի և կատարելագործված համակարգչային ծրագրերի:

Զգալի աշխատանքներ են կատարվել ընկերության տեխնիկական վերազինման, միջազգային քաղաքացիական ավիացիայի օդերևութաբանական սպասարկման ապահովումը կանոնակարգող փաստաթղթերի մշակման ուղղություններով:

Ընկերությունում ներկայումս շահագործվում են ավիացիոն բնագավառի ժամանակակից սարքավորումներ և ավտոմատ համակարգեր, որոնց շահագործումը և տեխնիկական սպասարկումը կատարվում են գործող նորմատիվային փաստաթղթերի համաձայն:

Գյումրու «Շիրակ» և Կապանի «Սյունիք» օդանավակայաններում տեղադրվել են վերջին սերնդի օդերևութաբանական կայաններ, որոնց մեջ ներառված են գերժամանակակից ուլտրաձայնային տեխնոլոգիաներով աշխատող քամու արագության և ուղղության, ջերմաստիճանի և խոնավության, հեռավորության տեսանելիության, ճնշման և ընթացիկ եղանակի տվիչներ:

Նախարարի տեղակալն իր գոհունակությունն է հայտնել ՓԲԸ-ում իրականացվող աշխատանքների որակի վերաբերյալ և նշել, որ պետք է կարողանան հասնել շատ ավելի բարձր որակի՝ շարունակաբար պահելով արդեն իսկ սահմանած նշաձողը:

Նախարարի տեղակալն անդրադարձել է նաև աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացման հարցին՝ նշելով, որ իրականացվող բարեփոխումների հիմքում առանցքային դեր ու նշանակություն ունեն նաև կադրային քաղաքականությունը, և փաստել, որ առանց բարձրակարգ կադրերի հնարավոր չէ որակյալ բարեփոխումներ իրականացնել»,- նշված է գրառման մեջ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/mnparmenia/posts/359673723020670>

**26.07.2022 թ. թ.**

### **Գործիսի շախմատի դպրոցի սան Ալեքս Ալեքսանյանը միջազգային մրցաշարի բրոնզե մեդալակիր**

Հուլիսի 15-ից 24-ը Վրաստանի Փոթի քաղաքում անցկացվեց «Նանա Ալեքսանդրիայի գավաթ 2022» շախմատի միջազգային փառատոնը: Մրցաշարին մասնակցում էին աշխարհի տասը պետություններից ավելի քան երեք հարյուր շախմատիստներ: Մեր մարզադպրոցի

սան Ալեքս Ալեքսանյանը D խմբում 9 հնարավորից վաստակելով 7 միավոր գրավեց երրորդ պատվավոր հորիզոնականը:

Շնորհավորում ենք Ալեքսին և նրա մարզիչ Վարդան Քարամյանին՝ հաղթանակի առիթով, մաղթելով նորանոր հաղթական ձեռքբերումներ:

Աղբյուրը՝

<https://www.facebook.com/GorisMunicipality/posts/pfbid0pDyribqQqu2JXQP7xKhVRsCefGV35eichdAMyHiRnTUwZaJ3kXMiwTzAYzhqg1VAI>

**26.07.2022 թ. թ.**

### **ԿԱՊԱՆՈՒՄ ԱՎԵԼԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԿԱՐԳ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՍ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ**

Համայնքապետարանի այս տարվա ռազմավարական ուղղություններից մեկը նաև համայնքի կանաչապատ տարածքների ավելացումն է, որի ուղղությամբ արդեն իսկ առարկայական աշխատանքներ են տարվում:

Համայնքային բյուջեի միջոցներով բարեկարգվել է Կապան քաղաքի Ա. Մանուկյան փողոցի թիվ 1 և թիվ 1ա շենքերի դիմացի կանաչապատման համար նախատեսված տարածքը: Բարեկարգման ծրագրի շրջանակներում ամբողջությամբ փոխվել են եզրաքարերը, տեղադրվել են նոր և գեղեցիկ լուսամփոփներ, ինչն էլ առանձակի շուք է հաղորդել քաղաքի արտաքին տեսքին:

Տարածքի ամբողջական տեսքն ապահովել են զանազան դեկորատիվ ծառերն ու ծաղիկները, որոնց ձեռքբերման հարցում իր ֆինանսական աջակցությունն է ցուցաբերել «Չաարատ Կապան» ՓԲ ընկերությունը:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/1129963797597097>

**22.07.2022 թ. թ.**

### **Միսիան խոշորացված համայնքի ավագանու ընտրությունը՝ սեպտեմբերի 25-ին**

ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի N 1124 – Ն որոշմամբ Սյունիքի մարզի Միսիան համայնքում 2022 թվականի սեպտեմբերի 25-ին նշանակվել է ավագանու համամասնական ընտրակարգով ընտրություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով:

Աղբյուրը՝

<https://www.facebook.com/photo.php?fbid=415009017335135&set=a.246762444159794&type=3>

**20.07.2022 թ. թ.**

### **Սյունիքում ներկայացվել է բուժաշխատողների պարտադիր հավաստագրման գործընթացը**

Սյունիքում ներկայացվել է բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման և պարտադիր հավաստագրման գործընթացը: Այս մասին տեղեկացնում է ՀՀ Առողջապահության ազգային ինստիտուտը:

Իրազեկվել է Սյունիքում բուժաշխատողների պարտադիր հավաստագրման գործընթացի մասին, նշվել, որ յուրաքանչյուր բարեփոխման հաջողությունը կախված է պատշաճ իրազեկումից՝ այս սկզբունքով ՀՀ Առողջապահության նախարարությունը՝ ԱԱԻ-ի հետ համատեղ վերջին շրջանում ակտիվ շրջայցեր է իրականացնում ՀՀ մարզերում՝ բուժաշխատողների պարտադիր հավաստագրման գործընթացին ծանոթացնելով տեղի բուժաշխատողներին:

Այս անգամ իրագեկման միջոցառում կայացել է Սյունիքի մարզպետարանում: Հանդիպմանը ներկա են եղել ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը, ՀՀ ԱՆ ԱԱԻ – ի տնօրեն Ալեքսանդր Բագարչյանը և ԱԱԻ-ի այլ մասնագետներ:

Օրենքի պահանջով բուժաշխատողների պարտադիր հավաստագրման գործընթացը, անհրաժեշտ կրեդիտային միավորներ կուտակելու կարգը ներկայացնելուց հետո ԱԱԻ-ի մասնագետները պատասխանել են տեղի բուժհաստատությունների ներկայացուցիչների հարցերին: Հանդիպման ընթացքում նշվել է, որ նոր օրենքը կնպաստի բժշկական ծառայությունների որակն էլ ավելի բարձրացնելուն, քանի որ բուժաշխատողների պարտադիր հավաստագրման շնորհիվ բոլոր մասնագետները պարբերաբար կծանոթանան բժշկագիտության վերջին նորություններին:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/syuniqum-nerkayatsvel-e-buzhashkhatokhneri-partadir-havastagrman-gortsyntatsy>

**18.07.2022 թ.**

**Գորիս-Կապան մայրուղու օկուպացված կարգավիճակը հսկող աղբյուրաբանական և ռուսական հենակետերը Որոտանում**

Հեռվում (Որոտան գյուղից դեպի հարավ) մեր Թասի լեռնանցքն է, որ 2021 թ. նոյեմբերից կարոտ է մարդկանց ու մեքենաների անցուղարձին...

Արևելքից (Որոտան գետին զուգահեռ)՝ բուռն ճինարարությամբ՝ Կուրաթլիից դեպի Որոտան է ձգվում աղբյուրաբանական նորաշեն մայրուղին...

Դե ինչ՝ խաղաղության ժամանակներ են...

Իսկ ընդհանրապես՝ ինչ-որ թախիժ և գույժ է ծորում այդ ամենից...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/goris-kapan-mayrukhu-okupatsvats-kargavichaky-hskokh-adrbejanakan-ev-rusakan-henaketery-orotatum>

**18.07.2022 թ.**

**Այսպես է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությունն աշխատում Գորիսում**

Քառասուներորդ օրն է՝ դիմել եմ «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությանն առ այն, որ նոր ջրագիծ անցկացնեն քաղաքի Յոլյան 1 և Յոլյան 2 մասնավոր տների համար, քանի որ հին ջրագիծը գրեթե չի աշխատում: Եվ մասնագետները խորհուրդ են տվել, որ խնդիրը կարելի է լուծել ավելի մոտիկ տեղից նոր ջրագիծ անցկացնելով:

Ի պատասխան մեր դիմումի՝ տարբեր փաստաթղթեր են պահանջել, մենք էլ ներկայացրել ենք պահանջվող թղթերը:

Այդքանից հետո անգամ խնդիրը շարունակում է մնալ չլուծված. և նշված երկու տունը քառասուն օր շարունակ ո՛չ խմելու ջուր ունեն, ո՛չ ոռոգելի:

Ընկերության Գորիսի մասնաճյուղից ասում են՝ «Քեզ վրա նամակ է գալու, որ ստանաս՝ կգաս մեզ մոտ...»:

Ու մինչև այսօր ո՛չ նամակն ենք ստանում, ո՛չ էլ արձագանքում են ստեղծված իրավիճակին:

Մինչև ե՞րբ է այս անամոթությունը շարունակվելու...

**Համլետ Թադևոսյան**

**Գորիս քաղաքի բնակիչ**

## Հ.Գ.

«Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությունը Սյունիքի մարզում առավել հայտնի է դատական հայցերով. չգիտենք նույնիսկ՝ դատավորները հասցնում են այդ հայցերի իսկությունը ստուգել, թե՞ հենց այնպես (ի վնաս բաժանորդների) որոշումներ են կայացնում:

Ցավոք, Համլետ Թադևոսյանը միակ բաժանորդը չէ, որ զայրացած է «Վեոլիա ջուր» ընկերության սպասարկման որակից: Այցելեք Գորիսի տարածաշրջանի յուրաքանչյուր գյուղ և Գորիս քաղաք ու կհամոզվեք, թե ինչպիսինն է այդ ծառայության իրական որակը:

Եվ ամենագլխավորը՝ մարդիկ պարզազույն մի հարցի պատասխան են ուզում իմանալ՝ ինչու՞ ենք Սյունիքում հանդուրժում այդ ընկերության գործունեությունը, եթե նրա ծառայության որակը հեռու է բավարար լինելուց, եթե հազարավոր սյունեցիներ դատարաններից տուն չեն գալիս՝ «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության հայցերի պատճառով:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/ayspes-e-veolia-jur-pb-ynkerutyunn-ashkhatum-gorism>

## 15.07.2022 թ.

### **Գորիս-Կապան ճանապարհի փակվելուց հետո Շուռնուխում ու Որոտանում ապրող մարդկանց կյանքը գլխիվայր փոխվել է. աղբբեջանցիները բնագծերում ամրանում են. Տիգրան Աբրահամյան**

Շուռնուխ և Որոտան գյուղեր էի գնացել: Գորիս-Կապան ճանապարհի փակվելուց հետո այստեղ ապրող մարդկանց կյանքը գլխիվայր փոխվել է՝ կենցաղից, ապրուստից մինչև անվտանգություն: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրառում է կատարել Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանը:

«Աղբբեջանցիները ինչպես մյուս, այնպես էլ՝ այս նոր ուղղությամբ բնագծերում ամրանում են, մեծ ինտենսիվությամբ աշխատանքներ իրականացնում:

Այս հատվածում վերջին անգամ 7-8 ամիս առաջ էի եղել, պետության ծրագրերը դանդաղ ընթացքի մեջ են, բայց կան անհատներ, մասնավոր կազմակերպություններ, որոնք ծրագրեր են իրականացրել/իրականացնում:

ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայությունը տեղում զգալի է, նկատելի է, որ տեղում, և՛ բնակիչների, և՛ իրենց հիմնական գործառույթների մասով ակտիվ գործում են:

Իրականում զորքերի համար ծառայություն իրականացնելու բարդ տեղամաս է, բայց հիմա վիճակը սա է:

Իմ պատկերացումները սահմանային անվտանգության ապահովման առումով, բնականաբար, տարբերվում է այս իշխանության մոտեցումներից և գործողություններից, բայց նկատելի էր, որ այս հատվածում սահմանապահ զորքերը նկատելի աշխատանք տանում են, որը ընթացիկ խնդիրներ լուծում է, սակայն միջնաժամկետ և երկարաժամկետ առումով, անելիքները շատ են, իսկ դրանց իրականացման սկզբունքները պետք է արմատական վերանայումների ենթարկվեն», -նշել է նա:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/711963.html>

## 14.07.2022 թ.

### **Սյունիքի մարզի Վարդավանք բնակավայրը ներառվել է սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում**

Գործադիրի որոշմամբ Սյունիքի մարզի Կապան համայնքի Վարդավանք բնակավայրը ներառվել է ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 18-ի 1444-Ն որոշմամբ սահմանված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում:

Արդյունքում Վարդավանք բնակավայրի ընտանիքները կօգտվեն սահմանամերձ բնակավայրերի համար նախատեսված սոցիալական աջակցությունից՝ անշարժ գույքի հարկի, բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի նկատմամբ տրվող արտոնություններից:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3OW8IMk>

**11.07.2022 թ.**

### **Գործադիր թատրոնի բեմում՝ ծմակուտյան պատկերներ՝ մարդու հայ տեսակի ու նրա վարքի ճշգրիտ բանաձևումներով**

ՀՀ վաստակավոր արտիստ Շանթ Հովհաննիսյանի գլխավորած Գործադիր պետական դրամատիկական թատրոնում հունիսի 29-ին եւ հուլիսի 5-ին սպասված իրադարձություն էր...

Հրանտ Մաթեոսյանի «Աշնան արեւ» վիպակի մոտիվներով բեմադրության առաջնախաղն էր...

Արվեստի վաստակավոր գործիչ Հայկ Մնացականյանն էր գրական այդ երկը թատերականացրել՝ պիեսի վերածել, ինքն էլ ստանձնել ռեժիսորությունը:

Որքանով տեղյակ ենք՝ «Աշնան արեւ»-ը առաջին անգամ է բեմադրվում Գործադիր պետական թատրոնում, թեև թատերասեր հանրությունը մինչ այդ շատ թե քիչ պատկերացում ուներ «Հայֆիլմի» կողմից 1977-ին այդ ստեղծագործության հիման վրա նկարահանված կինոնկարի, ինչպես էլ հանրապետության տարբեր թատրոններում (տարիներ շարունակ) դրա բեմադրության մասին:

Իսկ Գործադիր...Սյունիքի թատերասեր հանրությանը (հատկապես Սիսիանում եւ Կապանում) դեռեւս 1980-ականներից քաջածանոթ Հայկ Մնացականյանը երկու ամիս է՝ Գործադիր պետական թատրոնում է, հրավիրվել է Շանթ Հովհաննիսյանի կողմից, եւ, ըստ երեւույթին, հավակնոտ ծրագրեր ունեն, որի առաջնեկը «Աշնան արեւ»-ի բեմադրումն էր:

Եվ երբ տեղեկացանք գործիսյան բեմահարթակում «Աշնան արեւ»-ի առաջնախաղի մասին, մեզ նախեւառաջ երկու հարց հետաքրքրեց, որոնք էլ ուղղեցինք Հայկ Մնացականյանին:

-Նախ՝ իր գրի գործությամբ եւ հմայքով հայտնի մաթեոսյանական գրականության տիրույթ մտնելը որոշակի քաջություն է ենթադրում, մանավանդ երբ ինքդ էլ ստանձնում ես վիպակի բեմականացման գործը, մանավանդ երբ գրական այդ երկը վաղուց է արժանացել է թատերագիրների, կինոսցենարիստների ուշադրությանը, ասել է թե՛ քո սեփական ընկալումը մատուցելու, քո պատկերացրած ենթաշերտերը բացահայտելու խնդիր ես դնում ինքդ քո առաջ: Արդյո՞ք դիսկերը շատ չէին:

-Անշուշտ, Մաթեոսյան տեսանողի, մտածողի ու գեղագետի աշխարհ մտնելը մեծ պատասխանատվություն է ենթադրում: Բայց եւ մեր օրերում նրա հերոսներին, նրա հարցադրումներին ու բանաձևումներին անդրադառնալը, կարծեք, պահանջված է. այնքա՛ն



իրական են հերոսները, այնքան արդիական են մարդու հայ տեսակի ու նրա վարքի քանադեռումները,-ասաց Հայկ Մնացականյանը:

**-Իսկ ինչո՞ւ «Աշնան արեւ», ինչո՞ւ Աղուն...**

-Աղունը կենդանի գոյություն է: Նրա կերպարով փորձեցինք ցույց տալ, որ մեր բարոյականության ակունքները դեռ ցամաքած չեն ու չեն ցամաքելու, որ հայի ցանկալի տեսակի նկարագիրը դեռ կորած չէ, որ այդ տեսակն ապրում է մեր մեջ ու ապրելու է միշտ...

Հայկ Մնացականյանի համոզիչ պատասխանները, սակայն, սուկ խոսքեր կլինեին, եթե դրանց «առարկայացումը» չտեսնեինք բեմում...

5 հուլիսի. Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճը, կարելի է ասել, լեփ-լեցուն էր: Հանդիսատեսը մոտ մեկուկես ժամ համակ ուշադրությամբ դիտում-վայելում էր ներկայացումը...

Թումանյանի աշխարհի, Բակունցի Մթնածորի կողքին Մաթեոսյանը կանգնեցրել է իր Ծմակուտը, որը, հիրավի, գրական գրանցում ստացած ինքնավար մի եզերք է:

Իրադարձությունները տեղի էին ունենում հենց այդտեղ՝ Աղունի եւ Սիմոնի հարկի տակ, բայց... Գորիսում, ինչը հուշում է բեմի հետնամասի նկարչական ձեւավորումը՝ Շենի երկնահաս քարածայրերը, բերդաքարը, որ որոշ մասնագետների կարծիքով Ձագեձոր բերդի տեղանքն է, դեպի Սուրբ Մարտիրոս վիմավոր եկեղեցին եւ դեպի Նըհատակի լեռ ու Խաչի աղբյուր տանող արահետները...

Թե ինչու է Հայկ Մնացականյանը ծմակուտյան պատկերներին գորիսյան միջավայրում շունչ տվել, պարզ է դառնում բեմադրությունը դիտելու ընթացքում, որին կանդրադառնանք քիչ հետո:

Իսկ բեմահարթակում դեպքերը զարգանում են այնպիսի ընթացքով ու կենդանի, աշխույժ շարժումներով, որ հանդիսատեսը կամա թե ակամա մասնակից է դառնում գործողություններին:

Գլխավոր դերում Թեհմինե Աբրահամյանին ընտրելը ճիշտ որոշում է եղել: Նա հաջողում է աշնան գույների մեջ ցուցանել Աղունի ծանր նազանքը: Թեհմինե-Աղունը կարողանում է վերստին համոզել, որ Հրանտ Մաթեոսյանի հերոսները չեն մնացել գրքի էջերում, այլ տեղափոխվել են կյանք եւ ապրում են մեզ հետ:

Ամբողջ ընթացքում Աղունը պատրաստության մեջ է, Երեւան պիտի գնա...

Կյանքի աշնանը մոտեցող կինը որդուն ամուսնացնելու գնալուց առաջ հանրագումարի է բերում անցյալը, մեծ տառապանքների ու փոքր ուրախությունների ամբողջ շղթան, բեռնաձիու տոկունությամբ ապրած իր կյանքը, եւ անցած օրերի դառնության միջից, այնուամենայնիվ, լավատեսությամբ է նայում գալիքին, մտածում որդու տունը շենացնելու մասին:

Նրա խոսքերի մեջ, առաջին հայացքից, չարություն կա, բայց դա բխում է իր ապրած դառը կյանքի տխուր փորձից եւ որդու կյանքը լուսավոր, բարի տեսնելու մայրական մղումից:

Բեմադրության ամբողջ ընթացքում տեսնում ենք Աղունի «հակադիր» բեւեռը, որի մարմնավորումը Սիմոնն է, որի կերպարը (Չնորհիվ Հարութ Բաղիրյանի) նույնպես կերտված է վարպետորեն:

Սիմոնի տեսակը եւ ժամանակը հարձակման են ենթարկվում Աղունի տեսակի եւ հոգեբանության կողմից:

Միմոնի եւ Ադունի միջեւ ծավալվող խոսակցությունը միանգամայն տարբեր զգացողություն եւ աշխարհայացք ունեցող մարդկանց երկխոսություն է: Անվերջ վեճերի ու կռիվների պատճառներից մեկն էլ Միմոնին պարտք ունեցողներին առնչվող հարցն է՝ **«Միմոնն աշխատում, աշխատում, աշխատում է սրա-նրա համար, իսկ վարձը՝ էգուց, եկող տարի, երբեք... Ամբողջ աշխարհը Միմոնին պարտք է»:**

Ծմակուտյան իրականությունը, ավանդական ու նոր մտածելակերպի բախումը բացահայտվում են նաեւ Ադունի եւ Արուս սկեսուրի հակադրությամբ:

Ըստ Արուսի՝ **«Կինը սեր պիտի լինի ամուսնու համար»** դիտարկումը չի կարող սահմանափակվել կնոջ «հավերժական էությանը» հավատարիմ մնալու պահանջով: Դա անհրաժեշտ է նաեւ հասարակական ոլորտում: Կինն ամուսնու լծակիցն է, ու միասին պիտի քաշեն գութանը: Մի լծի «եզներն» իրար սովորում են ու իրար խնայում, էլ ուր մնաց մարդը: Կենդանին ներքին բնագոյով պաշտպանում ու խնայում է նրան, ում հետ քաշում է գութանը, եւ երբ ինքը կորցնում է լուծընկերոջը, ուրեմն կորցնում է ինքն իրեն...

Լյուդմիլա Պետրոսյանին հաջողվել է կերտել սկեսուրի կերպարը, հաջողվել է Ծմակուտի ավանդույթները կրողի կերպարն արտացոլել ըստ պատշաճի, որը հակասության մեջ է նոր մտածելակերպի հետ:

Ներկայացման բազմաթիվ ու կարեւոր շերտերից է ընտանիքի գաղափարը, որն ի վերջո նույնանում է օջախի, փոքր հայրենիքի գաղափարի հետ...

Ադունը Ծմակուտ է եկել Վանքից, եւ կարծում է, որ դրանով իսկ մեծ անարդարություն է տեղի ունեցել: Քաղաքից կամ քաղաքատիպ ավանից գյուղ է եկել, մինչդեռ հակառակը պիտի լիներ: Հոր՝ Իշխանի ունեցվածքն էլ հակադրության մեջ է Ծմակուտի ինչքին՝ «Իմ հոր պալատները-իմ մարդու գոմը»:

Ադունի եւ Միմոնի միջեւ մի ուրիշ խնդիր էլ կա...

Ներկայացման մեջ Սոնային չենք տեսնում, նա արդեն մահացել է, բայց ներկա է Ադունի եւ Միմոնի հարաբերություններում, ավելի ճիշտ՝ Սոնայի երբեմնի սերը հակադրված է Ադունին:

Ժամանակին բանը նրան էր հասել, որ կարտոլի բերքահավաքին Ադունը փորձել էր Սոնային ծեծել: Շուշանը բահն առել ու վրա է քշել՝ **«Այ աղջի, է՛յ... գլուխդ աշխատո՞ւմ է, թե չէ: Հիտլերի դեմ, որ մերոնք զոհվեցին, մենակ մեզ համար չզոհվեցին, ու ձերոնք էլ, որ էդպես ողջ-առողջ եկել են՝ մենակ ձեզ համար չեն եկել, է՛յ...»:**

Ու դա հիշում է Ադունը. ավանդական բարոյականը բախվում է տրամաբանությանը...

Բայց եւ այդ հակասությունների մեջ հաղթում է ընտանիքը, որը, ի վերջո, դառնում է օջախ, փոքր հայրենիք՝ Ծմակուտ...

Եվ ուրեմն՝ Ծմակուտն ապրում է ու պիտի ապրի: Հանուն դրա Ադունն առանձին դեպքերում իր իսկ էությանը «հակառակ» զգացողություն եւ մտքեր է ունենում. ի վերջո բնավորությունն ընթացք է, որը կարող է եւ կտրուկ շրջադարձներ ունենա, ինչին և ականատես ենք դառնում:

Քսանհինգ տարեկան Արմենակ տղա ունի Ադունը Երեւանում, իր չիրականացված երազները նրա միջոցով պիտի կյանքի կոչի:

Իսկ փոքրին՝ Սերոյին, խնդում է օգնել հորը, փորձում է նրան ենթակա դարձնել նյութականին (ինչպես ինքն է). «**Էս տանը ինչ-որ կա՝ քոնն է, տունն էլ հետը, ես ու քո հերն էլ քո ճորտերն ենք, այսինքն՝ քո ծառաները**»:

Սերոն էլ մոր հետ Ծմակուտից քաղաք մեկնել է ուզում, եւ նրան զայրացնում է մոր կովարար բնավորությունը (Սերոյի կերպարը նույնպես ստացվել է, դպրոցական Նվեր Մանուցյանը դրան հաճելիորեն հասել է):

Այո, Ծմակուտը պիտի ապրի՝ նաեւ Սերոյով, Սիմոնով ու Ադամով (վերջինիս դերում Մհեր Ղազարյանն է) եւ, իհարկե, Ադունով... Բայց լավ ապրելու ձգտումով, ապրելու ավանդական կարգից բարձրանալու ձգտումով, աշխատելու, արարելու, ստեղծելու, «հաշվելու» միջոցով...

Ասել է թե՛ «Աշնան արեւ»-ը ոչ միայն ու ոչ թե ծանր կյանքի, այլ մարդկային չկայացած երջանկության եւ նրան հասնելու, երկիրը կանգուն պահելու եւ շենացնելու ներքին մղումների մասին է, ինչում նորից համոզվեցինք Գորիսի պետական թատրոնի ներկայացման շնորհիվ:

\*\*\*

Ներկայացման ամբողջ ընթացքում մտովի զուգահեռներ էինք անցկացնում գրականության մեջ իր տեղը գտած Ծմակուտ աշխարհի եւ Սյունիքի լեռնային ու սահմանամերձ գյուղերի միջեւ...

Թվում էր, թե Ադունի նախատիպը մեր լեռնային գյուղերի հրաշալի տիկնայք են, ովքեր, բազում դժվարությունների պայմաններում անգամ, պինդ կանգնած են հայրենի հողին, ովքեր հազարամյակների խորքերը հասնող արմատներ ունեն հողում:

Հավանաբար այդպես էր մտածել նաեւ Հայկ Մնացականյանը, ով ծմակուտյան պատկերներին շունչ էր տվել հենց գորիսյան միջավայրում:

Ավելին, բեմադրության ընթացքում երբեմն-երբեմն թվում էր, թե ծմակուտցիք խոսում են մեր գյուղերի մարդկանց անունից կամ մտահոգ են մեր գյուղերի հոգսերով, թվում էր, թե Ադունը եկել ու բնակվում է մեր գյուղերում:

Ներկայացումը կոնկրետ օրինակներով ու հիմնավորումներով վերստին համոզեց, որ Ծմակուտը հայրենիք է, եւ Ծմակուտի կորուստը (Աստված մի արասցե) աչքալուսանք է լինելու մեր թշնամուն:

Մի խոսքով՝ ամբողջ բեմադրությունից, ինչպես եւ վիպակից, հառնում է իմ Հայաստան հայրենիքը...

**Հ.Գ.**

**Բազմաթիվ դժվարությունների մեջ ընկղմված Գորիսի թատրոնն աջակցության կարիք ունի:**

Մշակութային այդ օջախին մտահոգող գլխավոր խնդիրները (գոնե մասամբ) լուծելու դեպքում մեր հնամենի թատրոնը կարող է լույսի եւ հույսի մի նոր օջախ դառնալ սահմանապահ Սյունիքում, ինչում համոզվեցինք «Աշնան արեւ»-ի առաջնախաղը դիտելիս:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/gorisi-tatroni-bemum-tsmakutyanyan-patkerner-mardu-hay-tesaki-u-nra-varqi-chshgrit-banadze%D6%82umnerov>

**09.07.2022 թ.**

## **Կապանում հուշարձանների թվայնացման, մաքրման աշխատանքներ են իրականացվել**

Հունիս ամսվա ընթացքում «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ, Հուշարձանների պահպանության բաժնի գլխավոր մասնագետ Լևոն Մկրտչյանի ղեկավարությամբ իրականացվել են ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Բարաբաթում թաղամասի Սուրբ Հռիփսիմե եկեղեցու և Համլետավան գյուղի մատուռի ուսումնասիրման, թվայնացման և մաքրման աշխատանքները: Այդ մասին ասված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պահպանության Ծառայություն» ՊՈԱԿ-ի Ֆեյսբուքի էջում:

«Եկեղեցիների տարածքը մաքրվել է բուսաշերտից, աղբից: Ժամանակի ընթացքում Բարաբաթումի եկեղեցու շարվածքից թափված քարերը հավաքվել են եկեղեցու հարակից տարածքում:

Մաքրման, թվայնացման աշխատանքներին հաջորդելու են հնագիտական պեղումներ», - նշված է գրառման մեջ:

Աղբյուրը՝ <https://www.aravot.am/2022/07/09/1279237/>

**08.07.2022 թ.**

### **Սյունիքի մարզում կրացվեն երկու ՔՈԱՖ սմարթ կենտրոններ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալներ Ժաննա Անդրեասյանը և Արթուր Մարտիրոսյանը հանդիպել են «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ), Հայաստանում ԵՄ պատվիրակության, Եվրոպական ներդրումային բանկի և «ԱյԴի» բանկի ներկայացուցիչների հետ:

ԿԳՄՍՆ-ից [NEWS.am](https://www.news.am/)-ին հայտնում են, որ հանդիպման ընթացքում քննարկվել են Սյունիքի մարզում երկու ՔՈԱՖ սմարթ կենտրոնների բացման, ինչպես նաև ՔՈԱՖ-ի կրթական մոդելն այդ մարզում կիրառելու հարցերը:

Նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը հանդիպման մասնակիցներին ներկայացրել է Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերում կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման փորձնական ծրագիրը: Ծրագիրը, որը համակարգում է ԿԳՄՍՆ-ն, իրականացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Քաղաքաշինական կոմիտեի և Սյունիքի մարզպետարանի հետ սերտ համագործակցությամբ:

Փոխնախարարի խոսքով՝ ծրագրի շրջանակում նախատեսվում է ունենալ երկու ՔՈԱՖ սմարթ կենտրոններ՝ Կապան և Գորիս համայնքներում: ՔՈԱՖ-ի աջակցությունը կլինի հետևյալ ուղղություններով՝ տրանսպորտային ծառայությունների մատուցման միասնական լուծումներ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը համատեղելու և հասանելի դարձնելու համար, մասնավորապես՝ ուսումնական հաստատությունից ոչ ֆորմալ կրթություն իրականացնող ուսումնական կենտրոն սովորողների տեղափոխման համար: Եվ երկրորդ՝ հանրակրթության նոր չափորոշիչների ներդրման աշխատանքներ՝ Սյունիքի մարզի գյուղական համայնքների ուսումնական հաստատություններում անցվերենի և ԲՏ&Մ առարկաների դասավանդման բարելավման ուղղությամբ՝ ներառյալ ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումները:

ՔՈԱՖ-ի ներկայացուցիչ խոսքով՝ այս ընթացքում Սյունիքի մարզում իրականացվել է գնահատման գործընթաց՝ առկա մարտահրավերները և խնդիրներն արձանագրելու

տեսանկյունից: Նա գոհունակությամբ փաստել է՝ առկա է բավականին լավ առաջընթաց և արդյունավետ համագործակցություն ծրագրի մասնակիցների միջև:

Ժաննա Անդրեասյանը ևս շեշտել է, որ աշխատանքներն ընթանում են բնականոն հունով, և ԿԳՄՍ նախարարությունն անելու է հնարավորը՝ աջակցելու գործընթացին: Նրա խոսքով՝ առաջիկա տարիների համար կրթության ռազմավարության գերակայություններից է ողջ հանրապետությունում ունենալ որակյալ և հասանելի կրթություն՝ անկախ բնակավայրից, և դա ոչ միայն շենքային պայմաններն են, այլ նաև՝ կրթության բովանդակությունը: Այս համատեքստում փոխնախարարը մատնանշել է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության հարցը՝ ընդգծելով, որ այս երկու բաղադրիչները պետք է լինեն իրար համահունչ և փոխլրացնող, ինչպես նաև հասանելի բոլոր երեխաների համար: Նրա խոսքով՝ այս ուղղությամբ Սյունիքում իրականացվող փորձական ծրագիրը հաջողելու դեպքում այն կտարածվի ողջ հանրապետությունում: Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ այս առումով վառ օրինակ է ՔՈԱՖ-ի սմարթ կենտրոնի գործունեությունը, այդ թվում՝ անգլերենի ուսուցման և դասավանդման փորձի տեսանկյունից: «Ֆորմալ կրթության ծրագիրը, միանալով ոչ ֆորմալ կրթության այս միջավայրին, մի ամբողջ էկոհամակարգ կձևավորի և թույլ կտա, որ ունենանք որակյալ կրթություն», - նշել է Ժաննա Անդրեասյանը՝ հույս հայտնելով, որ Սյունիքի մարզում ևս այս մոդելը հաջողությամբ կիրականացվի, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստման մասով:

Փոխնախարարը նաև ներկայացրել է Կապան խոշորացված համայնքում իրականացվող ծրագրի շրջանակում աշակերտների և ուսուցիչների համար տրանսպորտային ծառայությունների մատուցման միասնական լուծումներ գտնելու հարցը: «Այսինքն՝ առկա է համակարգված մոտեցում՝ ժամանակակից ենթակառուցվածքներ, տրանսպորտային ծառայություններ, միջհամայնքային ճանապարհների վերանորոգում, կրթության բովանդակություն, ուսուցիչների վերապատրաստում, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության զուգահեռ կազմակերպում», - շեշտել է փոխնախարարը և հավելել, որ ներկայումս ծրագրի շրջանակում իրականացվում է կարիքների քարտեզագրում և գնահատում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ծրագրի այլ մանրամասներ:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/710962.html>

**08.07.2022 թ.**

### **Կապահովվի Վերին Խոտանանը շրջանցող ավտոճանապարհի կառուցումը**

Սյունիքի մարզում Վերին Խոտանանը շրջանցող և անհրաժեշտ տեխնիկական պայմաններին բավարարող ավտոճանապարհի կառուցման, ինչպես նաև ճանապարհային ցանցի զարգացման նպատակով կառավարությունն ընդունել է որոշում: Ըստ հիմնավորման, ռազմաքաղաքական իրավիճակով պայմանավորված Սյունիքի մարզի հաղորդակցության ուղիներին առնչվող հարցերը դարձել են մտահոգիչ և խնդրահարույց:

Հաշվի առնելով աշխատանքերի հրատապությունը, պետական անվտանգության ապահովման հարցում դրանց անհապաղ կատարման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի-Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցման շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության

ծառայությունների ձեռքբերման կարիքը համարել անհետաձգելի, թույլատրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ Մ-2, (Սյունիք) /Մ-2/ - Աղվանի - Տաթև - /Մ-2/ միջպետական նշանակության ավտոճանապարհի Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցման շինարարական աշխատանքները իրականացնել 2 փուլով:

1-ին փուլի համար շինարարական աշխատանքները ձեռք բերել «ՎՍՎ Քամփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից, իսկ նշված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունները ձեռք բերել «ՀԱԼԴԻ Քոնսալթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից:

Ընդհանուր առմամբ, վերաբաշխման միջոցով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը նախատեսվում է հատկացնել 2,431,096,087 ՀՀ դրամ նշված ճանապարհների կառուցման համար, որից՝ 2,392,148,431 ՀՀ դրամը շինարարության իրականացման համար, 23,000,000 ՀՀ դրամը տեխնիկական հսկողության ծառայության իրականացման համար և 15,947,656 ՀՀ դրամը՝ հեղինակային հսկողության իրականացման համար:

Աղբյուրը՝ <https://bit.ly/3bAJo0u>

**07.07.2022 թ.**

#### **«Սյունիք» ֆուտբոլային ակումբ. նոր հնարավորություններ և հեռանկարներ**

Յոթնամյա գործունեությունից հետո «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբը նոր անվանում ունի՝ «Սյունիք»: Մա սոսկ անվան փոփոխություն չէ, քանզի ակումբը նաև նոր ղեկավար ունի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյան: «Սյունիք» ակումբի նոր տնօրենը հստակ խնդիր է դրել ըստ ամենայնի ընդլայնել Սյունիքում ֆուտբոլի աշխարհագրությունը՝ ակումբի հովանու ներքո ընդգրկելով մարզի բոլոր բնակավայրերի երեխաներին, նաև նպաստավոր պայմաններ ստեղծել, որ նրանք կարողանան հաճախել ակումբի մարզադաշտ, որ քաղաքի կենտրոնից բավականին հեռավորության վրա է, և այդ ուղղությամբ հասարակական տրանսպորտ չի աշխատում: Իսկ դրանք երեքն են. մեկը՝ ճիմապատ, մյուսը՝ ցանովի խոտածածկով, երրորդը՝ արհեստական ծածկով: Ակումբն այս պահին մոտ 190 սան ունի, ովքեր հանդես են գալիս տարիքային ութ տարբեր խմբերում: Մի մասն արդեն մանկապատանեկան ֆուտբոլից վստահ քայլեր է անում դեպի մեծ ֆուտբոլ:

«Սյունիք» ակումբի տնօրենի տեղակալ Արթուր Մարգարյանը, ով 17 տարի Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ներկայացուցիչն էր մարզում, 2004 թվականից «Գանձասար-Կապանի» մանկապատանեկան բաժնի ղեկավար, այնուհետև թիմի պետ, 2014 թվականից ակումբի

փոխտնօրեն, նշում է, որ ակումբի ղեկավարությունը՝ հանձին Վարդան Ջհանյանի, մարզում ֆուտբոլը մասսայականացնելու և զարգացնելու նպաստավոր պայմաններ են ստեղծել, ինչը պիտի ճիշտ և նպատակային օգտագործել:

«Ակումբի տնօրենի շեշտադրումները համընկնում է մեր շեշտադրումներին: Ընդ որում խոսքը ոչ միայն և ոչ այնքան մանկապատանեկան ֆուտբոլին է վերաբերում, որքան կապանյան ֆուտբոլը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելը,-

ասում է Արթուր Մարգարյանն ու հավելում,-

Մյունիքի մարզի բոլոր քաղաքներում մասնաճյուղեր ենք ունենալու՝ հաստիքային մարզիչներով: Կրկնակի ուրախանալին այն է, որ գյուղական բնակավայրերն ընդգրկված են մարզում ֆուտբոլը զարգացնելու ծրագրի մեջ»:

Ինչպես տեղեկացնում է ակումբի մամուլի քարտուղար Աշոտ Ասատրյանը, խաղադաշտերի հարակից տարածքները բարեկարգվելու են, մարզադաշտի կողքին կկառուցվի տրիբունա, մարզադահլիճ, որի առաջին հարկում կլինեն հանդերձարաններ, խաղին պատրաստվելու և խաղից հետո հոգնածությունը թոթափելու հարմարություններ: Այս ամենը թույլ կտան, որ այդ խաղադաշտում բարձրագույն խմբի հանդիպումներ անցկացվեն:

- Քանի որ նախապատրաստական շրջանի առաջին շաբաթն է, մանկապատանեկան խմբերից տեղափոխվող տղաները պիտի հարմարվեն պրոֆեսիոնալ լիգային: Մեր աշխատանքները, նաև մարզչական շտաբինը, հարմարեցնում ենք նոր պայմաններին: Այս փուլում մենք ավելի շատ պիտի վստահենք պատանիներին, թեկուզև նրանք խաղադաշտում սխալներ թույլ տան: Մեր խնդիրը հենց դրանք շտկելն է: Շատ շնորհալի և օժտված երեխաներ կան մեր մարզում, միայն պիտի նրանց ճիշտ ուղու վրա դնել, - պատմում է առաջին խմբի մարզիչ

Տիգրան

Գևորգյանը,

ով

մարզչական PRO կարգ ունի: Նրա փոխանցմամբ՝ օգոստոսին մեկնարկելիք Հայաստանի ֆուտբոլի առաջնությանը մասնակցող «Մյունիք» ակումբի թիմը նախնական շրջանում իր կազմում կունենա հանրապետության տարբեր թիմերից հրավիրվածներ: Ակումբի ղեկավարությունը խնդիր է դրել, որ հետագայում «Մյունիք» թիմում հանդես գան միայն տեղացի ֆուտբոլիստներ :

Հունիսի 12-ին ակումբի սաները սկսել են պարապմունքները: Օրեր առաջ ակումբի մարզաբազայում էինք. այսպես ենք անվանում, քանզի, ինչպես նշեցինք, այդտեղ երեք խաղադաշտ կա: Տեսնել էր պետք, թե ամռան տապին ինչպես են պատանի ֆուտբոլիստները հղկում տեխնիկան, կատարում մարզիչ Տիգրան Գևորգյանի հրահանգները: Տասնվեցամյա Դավիթը պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ դառնալու ճանապարհին է, ասում է՝ սովորում ենք, թե ինչպես ճիշտ տեղաշարժվել դաշտում ... Արդեն 11 տարի է, ինչ ֆուտբոլ է պարապում, ակումբն իր համար ընտանիքի նման մի բան է դարձել:

...Կապանը տասնամյակներ ի վեր հայտնի է ֆուտբոլային ավանդույթներով: Քաղաքի ֆուտբոլի թիմը ստեղծվել է 1950-60-

ական թվականներին «Լեռնագործ» անվամբ: Մրցում էր Խորհրդային Միության առաջնությանն «Բ» խմբում, թիմում հանդես էին գալիս միայն կապանցիներ..., իսկ հանդիպումներն անցնում էին լեփ-լեցուն տրիբունաների ոգևորիչ աջակցության ներքո:

Կապանյան թիմում հանդես են եկել ֆուտբոլիստներ, ովքեր հետագայում հաջողությամբ խաղացել են հանրապետության առաջատար թիմում՝ Երևանի «Արարատում»՝ Նորայր Դեմիրճյան, Ռուդիկ Ավանեսյան, Հովհաննես Զանազանյան, Արկադի Անդրեասյան և ուրիշներ: Դեռ ավելին՝ կապանյան ֆուտբոլային թիմն իր կադրերն է գործուղել Երևանի «Արարատ»՝ Ալյոշա Անտոնյան, Գագիկ Հովհաննիսյան և ուրիշներ:

Իսկ Կապանի մարզադաշտը միշտ «աչքի է ընկել» բարձր հաճախելիությամբ և մարդկանց գոնե երկու ժամ կտրել առօրյա հոգսերից: Մանավանդ որ կապանցի ֆուտբոլասերը մարզա

դաշտ հաճախելու և սիրելի թիմին երկրպագելու տասնամյակներով ձևավորված կուլտուրա ունի:

Ուրեմն՝ նոր մեկնարկվող՝ ֆուտբոլի Հայաստանի առաջին խմբի առաջնության առաջին իսկ հանդիպումներից լինենք մարզադաշտում, մեր ներկայությամբ ոգևորենք նորաստեղծ կապանյան թիմին, ինչը նրանց անչափ անհրաժեշտ է: Մանավանդ որ թիմի անդրանիկ խաղից առաջ մարզամշակութային հետաքրքրական միջոցառում է լինելու, նաև այլ անակնկալներ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/syuniq-futbolayin-akumb-nor-hnaravorutyunner-ev-herankarner>

**06.07.2022 թ.**

### **Թշնամին Սեւ լճի հատվածում վերահսկում է ռազմավարական բարձունքներ եւ 13 քկմ տարածք**

2021 թ. մայիսի 12-ին ադրբեջանական զինված խմբավորումները ներխուժեցին ոչ միայն Գեղարքունիքի մարզ՝ Վարդենիսի տարածաշրջան, այլեւ ՀՀ սուվերեն տարածք մտան Սյունիքի մարզի Սեւ լճի հատվածում՝ խորանալով մինչեւ 3 կմ:

Գեղարքունիքում թշնամու օկուպացրած առնվազն 3200 հա (32 քկմ) տարածքի մասին գրել ենք: Նկատենք, սակայն, որ հաշվի առնելով ամերիկյան «Google» ընկերության քարտեզի թարմացումները՝ այդ թվի մեջ չենք ներառել Վարդենիսի Կուր զյուլի հատվածում ադրբեջանցիների առաջխաղացումը, որն առայժմ «Google»-ի քարտեզում չի երեւում:

2021-ի մայիսին Վարդենիսի հատվածում թշնամին ՀՀ սուվերեն տարածքից օկուպացրել է առնվազն 3200 հեկտար:

Այս անգամ կանդադարանանք Սեւ լճի հատվածում թշնամու օկուպացիային, որն ընդգրկում է Իշխանատափ, Գլուխ Ձագեձորի եւ Փոքր Իշխանասար գագաթների միջեւ ընկած տարածքը, ներառյալ՝ Սեւ լիճն ու դրա հարեւան Ջիլի լիճը:

Մայիսի 12-ին ադրբեջանցիներն ապօրինաբար առաջացել ու զբաղեցրել են երկու լճերին հարակից բարձունքները ՀՀ սուվերեն տարածքում՝ հսկողություն սահմանելով ոչ միայն դրանց եւ ավելի ցածրադիր տարածքների հանդեպ, այլեւ տեսադաշտ բացելով դեպի Գորիս: Ըստ խորհրդային քարտեզների՝ Հայաստանի ու Ադրբեջանի սահմանն անցնում է Սեւ լճի վրայով: Լճի հայելու մակերեսը, համաձայն «Google»-ի քարտեզի, 1,7 քկմ է (170 հեկտար), որից Ադրբեջանի տարածքում է գտնվում 0,3 քկմ-ն (30 հա), այսինքն՝ ընդամենը 18 տոկոսը, այնինչ այսօր ամբողջ լիճը հայտնվել է թշնամու վերահսկողության ու դիտարկման տակ:

### **Հայկական կողմի հասանելիությունը Սեւ լճին հարաբերական է**

Նկատենք, որ հայկական կողմը, այդուհանդերձ, հարավ-արեւմուտքից հասանելիություն ունի լճին: Ընթերցողները գուցե կհիշեն, որ այն ժամանակվա փոխվարչապետ Տիգրան Ավինյանը մի քանի պաշտոնյաների հետ այցելել էր Սեւ լիճ ու 2021-ի մայիսի 15-ին լուսանկարներ հրապարակել հենց այդ՝ հարավարեւմտյան ափից: ՀՀ տարբեր տրամաչափի պաշտոնյաներ եւ իշխանական ու իշխանամերձ լրատվամիջոցներ այդ օրերին պարբերաբար պնդում էին, որ լճի հանդեպ հայկական ուժերն ունեն վերահսկողություն, սակայն իրականությունը թե՛ այն ժամանակ, թե՛ հիմա այլ է:

Կարմիրով նշված են հայկական, իսկ կապույտով՝ ադրբեջանական դիրքերը. օկուպացված տարածքը դեղին է



Եթե նայենք ռեյիեֆին, կտեսնենք, որ լճին մերոնց հասանելիությունը հարաբերական է (վերահսկողության մասին խոսելը չափազանցություն կլինի), քանի որ դեպի լճի հարավարեւմտյան ափ տանող ճանապարհը եւ ափի մոտ տեղադրված հայկական դիրքերը գտնվում են հարակից բարձունքները զավթած թշնամու անմիջական դիտարկման տակ: Ադրբեջանցիները Սեւ լճի մոտ զբաղեցրել են ռազմավարական նշանակության երկու լեռ. 3451 մ բարձրություն ունեցող Փոքր Իշխանասար լեռնագագաթը՝ արեւմուտքից (ներքեւի լուսանկարում ամենից ձախ գտնվող կապույտ կետն է) եւ Գլուխ Չագեձորի գագաթը (3233 մ)՝ հարավից (ներքեւի լուսանկարում ամենից աջ գտնվող կապույտ կետն է):

Եթե Փոքր Իշխանասարը բաժանարար կետ է պատերազմի մեջ գտնվող երկու երկրների միջեւ, ապա Գլուխ Չագեձորի լեռը գտնվում է սահմանից 2,5 կմ խորության վրա՝ ՀՀ տարածքում: Եվ այսօր ադրբեջանցիներն այս երկու լեռնագագաթին տեղադրած իրենց մարտական հենակետերից վերահսկում են դրանց միջակայքում գտնվող ամբողջ ցածրադիր գոտին՝ լճի հարավարեւմտյան ափ տանող ճանապարհը եւ ափի մոտ գտնվող հայկական դիրքերը: Նշված երկու գագաթների միջեւ հեռավորությունն ուղիղ գծով 4,1 կմ է, ինչը նշանակում է, որ երկու կողմից թշնամին կարող է տարբեր զինատեսակներից ինտենսիվ կրակի տակ պահել իր հենակետերի միջակայքը:

1280 հեկտար տարածք

Սեւ լճի հատվածում, ըստ «Google»-ի քարտեզի, որի արբանյակային պատկերները վերցված են եվրոպական «Airbus» եւ ամերիկյան «Maxar Technologies» ընկերությունների արբանյակներից, վերջին պատկերներն արվել են 2021-ի սեպտեմբերին՝ ներխուժումից 4 ամիս անց, երբ արդեն տեսանելի են հակամարտ զորքերի դիրքերը: Բայց քանի այդ քարտեզը թարմացվում է ըստ առանձին սեզմենտների, դրանում 2021-ի մայիսյան ներխուժումից հետո երեւում են ադրբեջանական ոչ բոլոր մարտական հենակետերը: Բացը լրացնելու համար «Google»-ի քարտեզը համադրել ենք եվրոպական «Sentinel-2A» արբանյակի ամենավերջին (2022 թ. հունիս-հուլիսին արված) լուսանկարների հետ՝ հասկանալու համար, թե ինչ տարածք է ներառում թշնամու օկուպացիան:

Գծերով իրար ենք միացրել ադրբեջանցիների առաջապահ դիրքերը: Այս հաշվարկով ստացվում է, որ ադրբեջանիցների վերահսկողության տակ է անցել 12,8 քկմ կամ 1280 հեկտար տարածք: Սա հավասար է 1793 հատ ֆուտբոլային խաղադաշտի, ինչպիսին ունի Երեւանի «Հանրապետական» ստադիոնը:

Հասկանալի է, որ ունենալով բարենպաստ դիրքեր շրջակայքի վրա գերիշխող բարձունքների վրա՝ թշնամին վերահսկում ու դիտարկում է շատ ավելի մեծ տարածք, քան գուտ իր թիկունքում գտնվողն է: Այս առումով ամենամտահոգիչը, թերեւս, հայկական բնակավայրերի ու ճանապարհների՝ ադրբեջանցիների խոցման տիրույթում գտնվելն է:

### **Անվտանգային ռիսկ**

Անվտանգային լուրջ ռիսկ է այն հանգամանքը, որ թե՛ Գլուխ Չագեձորի սարից, թե՛ վերջինիս հարեւան 2924 մ բարձրությամբ գագաթից, որտեղ եւս դիրքավորվել է թշնամին, տեսադաշտ է բացվում դեպի Գորիս եւ դրան կից Ակներ ու Վերիշեն գյուղեր: Մասնավորապես՝ Չագեձորից մինչեւ Գորիս եւ Երեւան-Գորիս-Ստեփանակերտ ճանապարհն ուղիղ գծով 10 կմ է, ինչը խոցելի հեռավորություն է հրետանու համար: Նույն գագաթից Ակներ գյուղը 8 կմ-ի վրա է, Վերիշենը՝ 9 կմ-ի:

Բնակավայրերին ավելի մոտ է ադրբեջանցիների զբաղեցրած 2924 մ բարձրությամբ գագաթը, որտեղից մինչև Ակներ 6 կմ է, Վերիշեն՝ 7, Գորիս՝ 8: Թշնամու հրետանու համար բարենպաստ է նաև Փոքր Իշխանասարի հեռավորությունը նշված բնակավայրերից, մասնավորապես՝ մինչև Գորիս 14 կմ է:

### **Իշխանատափից մինչև Փոքր Իշխանասար**

2021-ի մայիսին ադրբեջանցիները Սեւ լճի արեւելքում առաջացել են մինչև Իշխանատափ բարձունք (2561 մ), որտեղից երեւում են 5 կմ հեռավարության վրա գտնվող Խոզնավար եւ Վաղատուր գյուղերը: Այս բարձունքով է անցնում Գորիս-Վերիշեն-Ակներ-Սեւ լիճ ճանապարհը, որը փակվել է. հենց ճանապարհի վրա իրար դիմաց են տեղակայվել հայկական ու ադրբեջանական դիրքերը: Արեւմուտքում էլ թշնամին հասել է մինչև Փոքր Իշխանասար՝ ճանապարհ հարթելով Սեւ լիճը հյուսիսից եզերող զառիթափի վրայով: Իշխանատափից մինչև Փոքր Իշխանասար 8,2 կմ է:

### **Թշնամին օկուպացրել է պետական արգելավայրը, արոտավայրերն ու ջրամբարը**

Սեւ լիճն ընդգրկող 240 հեկտարը համարվում է բնության հատուկ պահպանվող տարածք: Դեռ խորհրդային տարիներին՝ 1987-ին, այն ճանաչվել էր պետական արգելոց, իսկ 2001-ին ՀՀ կառավարությունն արգելոցը դարձրել է արգելավայր: Ըստ «Սեւ լիճ» պետական արգելավայրի կանոնադրության՝ այն գտնվում է Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար հրաբխային կոնի մերձկատարային մասում՝ 2670 մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է սառցադաշտային ծագման Սեւ լիճը (200 հա մակերեսով) եւ առափնյա մերձալպյան մարգագետնային էկոհամակարգերը (40 հա մակերեսով): Արգելավայրի կազմավորման հիմնական նպատակն է Սեւ լճի ջրային եւ նրա հարակից ցամաքային էկոհամակարգերի, բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունն ու կայուն օգտագործումը, Սեւանա լճի իշխան եւ բեղաձուկ ձկնատեսակների արհեստական վերարտադրության համար անհրաժեշտ ձկնային պաշարի աճեցումը:

Ադրբեջանցիների օկուպացրած տարածքներն անասնապահությամբ զբաղվող տարածաշրջանի բնակչությունն օգտագործում էր որպես արոտավայր: Առցանց քարտեզներն ուսումնասիրելիս թե՛ օկուպացիայից առաջ, թե՛ հետո կարելի է տեսնել սարվորների ցանկապատած բազմաթիվ մակադատեղերը, որոնք հակամարտ զորքերի շփման գոտում հայտնվելուց հետո դարձել են անօգտագործելի:

Տարածաշրջանի տնտեսությանը վնաս է հասցվել նաև Սեւ լճի հարեւան Ջիլի լճի օկուպացիայով: Վերջինս հայտնի է տարբեր անուններով՝ Ջանլիճ, Ջինլի, Ջելնի, Ջալին, Ջալնի, Ջան, Ջանլի, Ջապլի, Ջապնի: Այս լիճը վերածված է ջրամբարի, եւ ըստ տարբեր քարտեզների («Google», «Yandex»), ԽՍՀՄ-ից ժառանգված հայ-ադրբեջանական սահմանն այս պարագայում եւս, ինչպես Սեւ լճի դեպքում, անցնում է ջրամբարի հայելու վրայով, բայց ի տարբերություն Սեւ լճի՝ Ջիլիի չնչին մասն է գտնվում ադրբեջանական կողմում, ընդ որում՝ քարտեզների համաձայն՝ սահմանն անցնում է նաև պատվարի վրայով՝ կիսելով այն: Ժամանակին «Հետքը» գրել էր Հայաստանի ջրամբարների մասին՝ օգտագործելով ոլորտի մասնագետների տրամադրած տվյալները: Ըստ դրանց՝ Ջիլի լճի ջրամբարի ընդհանուր ծավալը 0,5 մլն խմ է: «Google»-ի քարտեզի չափումներով՝ հայելու մակերեսը շուրջ 27 հեկտար է կամ 0,27 քկմ: Ջրամբարից սկիզբ է առնում Խոզնավար գետը, որը հոսում է համանուն

գյուղի միջոցով ու Ծիծեռնավանքի մոտ միանում Աղավնո գետին: Բայց Ջիլին կարևոր դեր ունի ոչ միայն Խոզնավար գյուղի համար:

2005-ին ՀՀ կառավարությունն այս ջրամբարը, որը գնահատվել էր 812 հազ. դրամ, ամրացրել էր ջրային պետական կոմիտեին, սակայն 2012-ին որոշել էր հետ վերցնել ու նվիրել Վերիշեն գյուղին (որոշման մեջ ջրամբարի տարածքը նշվում է 23 հա), ինչից հետո պիտի համատեղ օգտագործվեր Վերիշեն, Խոզնավար, Վաղատուր, Խնածախ, Խնձորեսկ գյուղերի կողմից: Ըստ կառավարության 2012 թ. հաղորդագրության՝ ջրամբարն ավելի քան 20 տարի չշահագործվելու պատճառով հայտնվել էր անմխիթար վիճակում, իսկ նվիրաբերությունից հետո նշված գյուղերի արոտների բարելավման ծրագրով պիտի նորոգվեր, կառուցվելու էր նաև արոտների ջրարբիացման նոր ցանց, որի շնորհիվ պիտի ջրարբիացվեր 8000 հա արոտավայր, ինչի շնորհիվ նախատեսվում էր թե՛ անասնազվխաքանակի ավելացում, թե՛ ֆինանսական հոսք տեղական բյուջեներ:

Ճիշտ պատասխանը՝ ավելի քան 45 քկմ

Վարդենիսի տարածաշրջանում, հաշվի առնելով թշնամու առաջապահ մարտական հենակետերի թիկունքում հայտնված տարածքը, մենք հաշվարկել էինք առնվազն 32 քկմ, իսկ Մեւ լճի հատվածում՝ 12,8 քկմ, այսինքն՝ ընդհանուր շուրջ 45 քկմ: Սրան պիտի գումարենք նաև Գեղարքունիքի Կուր գյուղի հատվածում թշնամու օկուպացիան:

2021-ի նոյեմբերի 16-ին Ադրբեջանը Մեւ լճից ոչ հեռու՝ Ծիծեռնաքարի հատվածում, ինչպես նաև Ջերմուկի ուղղությամբ նոր ագրեսիա սանձազերծեց, ինչի հետեւանքով հայկական կողմը դիրքային եւ մարդկային կորուստներ ունեցավ, եւ ամսի 16-ին ՀՀ անվտանգության խորհրդի նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ 2021 թ. մայիսի 12-ից թշնամին օկուպացրել է ՀՀ 41 քկմ ինքնիշխան տարածք: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 17-ին, ԱԺ-ում Փաշինյանը նշեց. «Երեկվա գործողությունների հետեւանքով այս բալանսը որեւէ ձեւով չի փոխվել» (նկատի ուներ 41 քկմ-ի օկուպացիան): Այս թիվը հետո շատ շրջանառվեց:

Բայց ահա 2021-ի նոյեմբերի 23-ի ասուլիսում Փաշինյանն ասաց. «2020-ի նոյեմբերի 10-ից հետո այդ տարածքները՝ ավելի քան 40 քկմ՝ 40-45 քկմ, հայտնվել են Ադրբեջանի վերահսկողության ներքո, եւ դա մայիսի 12-ին տեղի ունեցած հայտնի ներխուժումն է ՀՀ տարածք»: Իսկ ահա այս տարվա մայիսի 29-ին, արձագանքելով ադրբեջանցիների հերթական սադրանքին, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց. «Ադրբեջանի ԶՈւ ստորաբաժանումները 2021 թ. մայիսից Սոթք-Խոզնավար հատվածում ապօրինի կերպով ներխուժել են ՀՀ ինքնիշխան տարածք եւ օկուպացրել ավելի քան 45 քկմ տարածք»:

Այսպիսով՝ 2021-ի նոյեմբերի 16-ին Փաշինյանն ասում էր, որ մայիսի 12-ի օկուպացիայի ծավալը (41 քկմ) չի փոխվել նոյեմբերյան ագրեսիայի ժամանակ, մեկ շաբաթ անց նշում էր, որ մայիսի 12-ին Ադրբեջանն օկուպացրել է 40-45 քկմ, իսկ ահա ԱԳՆ-ն վերջերս հայտարարում է, որ թշնամին Սոթք-Խոզնավար հատվածում օկուպացրել է ավելի քան 45 քկմ տարածք: Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ ադրբեջանական օկուպացիան նշված հատվածում իսկապես գերազանցում է 45 քկմ-ն:

Աղբյուրը՝ <https://hetq.am/hy/article/146240>

## ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿ՝ ՄԵՂՐԻԻ ՄԱՔՍԱԿԵՏՈՒՄ. ՏԵՍԱՆՑՈՒԹ

Մեղրիի մաքսակետում լարված իրավիճակ է ստեղծվել:

«Հրապարակ»-ին ահազանգած քաղաքացիներից մեկն ասաց, որ այս պահին բազմաթիվ ներկրողներ են հավաքվել մաքսակետի մոտ եւ բողոքում են վերջին որոշումից, որը կայացրել է Իրանը:

«Ամեն մի մեքենայի մուտքի համար պարսկական կողմը 120 դոլար է պահանջում, նախկինում այդպիսի բան չի եղել: Տրանսպորտային ծախսերն էլ են թանկացել, հիմա էլ ձեռք չի տալիս այս ամենը», - նշեց մեր զրուցակիցը:

Նա նաեւ ավելացրեց, որ մի քանի օր առաջ հանդիպել են ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանի հետ, վերջինս խոստումներ է տվել. «Համաձայնության են եկել Բադասյանի հետ, որ նա պետք է գրավոր թուղթ տա, որ մեքենաները կարողանան անցնել մյուս կողմ՝ նեյտրալ գոտի, վերաբարձում կատարվի, սակայն այդ գրավոր թուղթը դեռ չկա»:

Աղբյուրը՝ <https://hraparaktv.am/post/1151d888b4a03100985e927e264cea8d>

Կազմող՝ Ս. Ալավերդյան